

89199

89199.092

UK-42

91.99.092

0 -

9/10

-6 NOV 2011

Ա-42

ՄԱՅՆԱՆՔԻ ԳՈՒՍԱԲԵՐ

ԲԻԻ 28


# Ա. ԱՅԱՐՈՆԵԱՆԻ ՃԱՌԸ

(ԱՐՏԱՆՈՒՄ ԻՐ ԳՐԱԿԱՆ ՔԱՌԱՄՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ,  
ՍՈՒՊՈՆԻ ՄՐԱՀԸ, 1930 ՄԱՅԻՍ 10-ԻՆ)



Գ.Ա.ԼԻՐԷ  
ՏՊԱՐԱՆ «ԳՈՒՍԱԲԵՐ»  
1930

11 288



.01. 2013


65.468

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԱՆԻԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ Ի ՍՓԻԻՌՍ ԱՇԽԱՐՀԻ

ՄԵՏԼՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՕՍ. ԵՌՈՒՆ  
17.01.2013  
17.01.2013  
17.01.2013

2498-2002



Ա. Ա. ՆԱՐԿԻՍ

Իմ սիրելի հայրենակիցներ.

Կեանքիս ամէնէն դժարին օրերից մէկն է:

Ի՞նչ ասեմ բոլոր փառաբանութիւններին, ներբողներին, գով-  
քի, համակրանքի, յարգանքի, սիրոյ բոլոր այս սրտաբուխ զե-  
ղումներին, որ իմ բարի, արդար ու վշտարեկ ազգը շուայեց ինձ  
աշխարհի բոլոր ծայրերից, ուր մեր դժխեմ, նզոված բախտը  
շարտել է մեր վատրանդի հայրենաբաղձ բեկորները:

Յուզւած եմ, խորապէս զգածւած ու անճունօրէն՝ երախտա-  
պարտ:

Ինչո՞ւ չասեմ սակայն, ինչպէ՞ս չասեմ, որ այս բոլորը ինձ  
յիշեցնում է ծնողի քնքշութիւնը դէպի իր գուաղը. չէ՞ որ իւրա-  
բանջիւր մ'օր համար իր որդին ե՛լ ամէնէն առաքինին է, ամէ-  
նէն շնորհագարդւածը, ե՛լ ամէնէն կատարեալն ու փառաւորը:

Եւ անա ես եւս, ցեղին մայրական քնքշութեան, գորովի,  
գուրգուրանքների առջեւ լոււմ եմ, ու գլուխ իտնարհում ակ-  
նածանրով:

Լոււմ եմ. թողնելով որ մի օր գունատ, դաժան ու անաչառ  
պատմութիւնը իր խօսքն ասի եւ իր արդար վճիռն արձակի:

Եւ մի՛նչեւ այդ...

Հին հելլէնները մահից առաջ ոչ մի մեծութիւն եւ արժանիք  
չէին փառաբանում յաւիտենականութեան համար. եւ կարծեմ  
մեզնից աւելի իմաստուն էին ու զգաստ:

Այս հանդիսաւոր ժամին, հաւատացէք ինձ, հաւատացէք ինձ,  
որ այս օրը ես չեմ փնտռել, վասնզի մեծարանքի, գովքի սպա-  
սումն ու ակնկալութիւնը բիրտ ժխտումն է հանրային գործի  
ներքին արժէքի, եւ զոհարելութեան բարձր իմաստին է բաղ-  
խում:

Ակնկալւած փառքն իրական ու ճշմարիտ փառքին ոտին է:

Գիտեմ, որ սպասում էք իմ խօսքին:

Գիտեմ նաեւ, որ չպիտի կարողանամ գոհացնել ձեզ:

Ես պարտասուած եմ, յոգնաբեկ ու ակար, տեսողութիւնս խեղ-  
նացած եւ հեւքս նւագ: Եւ անա կեանքումս առաջին անգամն է.

որ ստիպւած եմ իմ հրապարակային խօսքը գրաւոր անել:

**Ետտ չպիտի խօսեմ:**

Եւ այն քիչը՝ որ պիտի ասեմ, իմ անդառնալի ուխտն է կեանքիս մնացորդի համար:

Եւ իմ վերջին կտակը, եթէ ինձ վիճակւած է վաղաժամ թողնել այս դաժան, անհոգի աշխարհը:

Ե՛լ մէկի ե՛լ միւսի — կեանքի եւ մահու համար—ես կազմու պատրաստ եմ:

Ամիսներից ի վեր մեր բոլոր գաղութներից խանդավառ ցոյցերի, մաղթանքների եւ օրհնանքի ծայներ եմ լսում:

Ու մտովի խորհում եմ եւ տրամուրթեամբ ինքս ինձ հարցնում, թէ՞ ո՞ւր է այս բոլորի իմաստը:

Եթէ այդ ամէնը ինձ համար է եւ իմ խեղճ անւան շուրջը, ապա նա շատ շատ է՝ եւ նոյն իսկ աւելորդ:

Ապա եթէ հայ լեզուի, հայ գրի, հայ գրականութեան համար է, շատ քիչ է, վասնզի կապւած է առիթի հետ:

Ու տրամուրթիւն ունի հոգիս, տրամուրթիւնը մարող գեղեցկութիւնների, լրւող, մոռացւող տաճարների, սգուր թաղանթների պէս գերեզմանների վրայ կծկւած մեր աւանդութիւնների:

Հայոց լեզու, հայոց լեզու, քեզ յարգա՛նք... ամէն օր, ամէն ժամ տրորւած, անարգւած դու իմ խեղճ լեզու, ո՞վ քեզ սիրեց, քեզ վրայ ո՞վ գուրգուրաց երբեք...:

Եւ օտար, պաղ հորիզոնների տակ ո՞ւմ է հասնում ուռաչին սառնամանիքի սարսուռը, եթէ ոչ քե՛զ, ո՞վ իմ գրախոսային բարբառ մայրենի:

Ո՞վ է մոռացւում ու լալիս անտէր անտիրական որբուկի պէս դուրս նետուած հայրենի յարկերից եթէ ոչ դու, ո՞վ իմ դաշն, քնքոյշ, հիասքանչ լեզու:

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Ախորճ, ընտանի իմ հոգու համար,  
Առաջին դու խօսք ակնաչիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին հատուած:

Ո՞ր դաժան ասուածը քո գեղեցկութեան առջեւ կուրացաւ եւ ազնիւ, որ դու անհիւրընկալ ու անիրաւ հորիզոնների տակ քո իսկ գաւազների շրթանքներին խորշակահար՝ մեղմօրէն հիւծես, հեծեծես ու թօշնես:

Եւ քանի դեռ գէթ հանդիսուոր օրերին յիշում են քեզ, արի՛ւ մա՛յր իմ, ուրախանանք այսօր. վասնզի վախ ունեմ, որ օտար ասիերի ցուրտ հողմերով տարութե՛ր՝ շուտով մեր նոր սերունդները այլեւս չեն հասկանայ մեզ:

Հոգիս պայթում է այն մտածումից թէ ի սփիւռս աշխարհի վայրավատին տարողնւած ցեղիս զաւակները — իմ գաւազները — կարող են մի անիծակուռ օր իրենց աչքերը փակել մայրենի լեզուից ճառագայթող գեղեցկութեան առջեւ եւ ուրանալ իրենց մայրերի օրօրները, որոնց վրայ ազգի ճակատագիրն է գրոշմւած Աստուծու ձեռքով:

Օ՛, ոչ, ո՞վ դժխեմ ճակատագիր:

Ա՛հ, թողէք, որ ցատումով հեռու վանեմ ինձնից այս ահաւոր մտածումը:

Թողէ՛ք, որ խլեմ բուրվառը երկիւղած ու հաւատուար ձեռքերից եւ միայն ու միայն Հայ Լեզուին, Հայ Միտքին ու Հայ Տեղին խնկարկեմ:

Թողէ՛ք որ հաւատամ, թէ այս բոլորը երախտագիտական օրհներկ է նրանց յիշատակին, որոնք ինձնից առաջ եկան իրենց բերնիցս ու բրօնզէ խօսքերն ասացին ու անցան հսկանքի պէս:

Թողէ՛ք որ հաւատամ, թէ այս ամէնը բերկրալիճոյսի զգիւնէ խանդավառութիւններ են նրանց ճամբին, որոնք պիտի գան, եւ որոնց ոտնածայները լսում եմ ահա յատկօրէն ու երջանիկ:

Ա՛հ, ի՛նչ հարուստ, ի՛նչ յուռթի, որչափ քեղուն է հայ հողը, արժի օրհնեալ ծոցից, որպէս Արագածազգի գլխից, ժայթքում են նորանոր ու պերճ սերունդներ, Հայոց աշխարհի հոգեւոր բուրասանը մշակելու համար: Ու գալիս են իրար յետեւից, որպէս ամէն օր ծագող արշալոյսները:

Ա՛հ, վառ պահեցէք յիշատակը նրանց՝ որոնք մեր Գիրն ու Բանը զարդարեցին ու անցան:

Սիրեցէք նրանց՝ որ պիտի գան, պիտի գա՛ն...

Եւ իմ սերունդը... Է՛հ, նա էլ իղէալի արբեցուցիչ ու կախարդական աղբիւրից խմեց եւ տառապանքն ու ազատութիւնը սիրեց որպէս իր մօր ստինքները:

Անհասանելի երջանկութիւն է այս, բաւ է:

Սթրկութեան շղթաներից դեռ նոր-նոր իր հոգին ազատագրած այս ազգը գրի, խորհրդի, գեղեցկի պաշտամունքի պէտքն ունի: Սիրեցէք մեր գիրն ու գրականութիւնը, սիրեցէք մեր լեզուն:

մեր հին—հին հայրերի, մեր Սահակների ու Մեսրոպների պէս, նարեկացու, Արովեանի պէս:

Ազգային խոշոր փուլզումների, թշուառութեան օրերին, երբ կատաղութեան ու աւերածի մրրիկները բրբջալով անցնում են օրհասների վրայով, ամէն ինչ անցնում է.

ե՛լ իշխան ու զօրական.

ե՛լ փառք ու ծիրանի.

ե՛լ զանձ ու ճոխութիւն.

ե՛լ դղեակ ու բերդեր.

եւ պալատ ու ապարանք... Ու մնում են կանգուն միայն գիրն ու լեզուն, որոնք իրենց խորհրդաւոր ծոցում հարագատ մօր քնքշութեամբ ծածկում ու պահպանում են անաղարտ այն ամէնը՝ ինչ փլել է ու խորտակել, բոլորն ինչ մի նկուն, աւերած ազգ կարող է ըզձալ, յուսալ ու երագել:

Ամէն անգամ, երբ հայրենիքը իր աւերակների փոշին է ցանդում իր զլխին որպէս սփ բօղ, եւ իր հրաշագեղ պատկերը ծածկում է մեր աչքերից, փնտռեցէք նրան մեր հին ու նոր մատենաներում. Հայրենիքն այնտեղ է կանգուն, հզօր ու յախտենալիան:

Սիրեցէք գիրն ու լեզուն:

Վա՛յ հայոց ազգին, վա՛յ իր արեւին, եթէ մոռացւեն գիրն ու լեզուն:

Մեծ Արովեանի շրթունքներով ասեմ. «Ա՛խ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլլի, մարդ ընչի՞ նման կըլլի, մէկ ազգի պահողը իր հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր, էլ ընչով կարաս ասել, թէ ո՞ր ազգիցն ես...»:

«Զե՛՛ր եմ ասում՝ ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնիմ, ձեր արեւին դուրբան, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը դայիմ բռնեցէք»:

Մարգարէաշունչ, անո՛ւշ Արովեան:

Ես մի գիրք գիտեմ, որ ամէն գրագէտ հայի մանկութիւնն է գրել, որպէս մօր օրօր, եւ որ ահա հազար հինգ հարիւր տարի է ինչ սրբազան Մ. Լարայրի շնչով պահպանում է մեր ցեղի կորովն ու ոգին:

Ո՛վ հրաշագործ եղիշէ.

«Ոսկեծղի, գեղեցկատիպ ով ի՛մ գրքոյկ ոսկեշունչ, ազգիս փառքը, անբախտ օրը դու քարոզող անմռունչ»:

Եւ ի՛նչպէս չասեմ, որ ինձ համար չէ այս հանգէսը, այլ փառաբանութիւնն է նա բոլոր այն հիմաւուրց մտքի տիտաններին, որոնք դարերի ճակատը զարդարեցին սրանչելի ցեղիս անբիծ անձնով եւ հայ հանճարը փառաւորեցին յաւիտենականութեան համար:

Փառք ու օրհնութիւն Ձեզ, ո՛վ իմ պաշտելի պապեր:

Եւ Խորենացին ջրաղացպան մեռաւ:

Ու Ղազար Փարպեցին հալածանքի երեսից իր բախտը լացեց:

Ի՛նչ եղան միւսները, ո՛վ գիտէ...

Հապա մեր երէ՛կը...

Մեր վերածնութեան ռաճվիրանները, դարբնողները, Պէշիկթաշեան, Դուրեան, Մերենց ու Ալիշան, Արովեան ու Նալբանդեան, Բաֆֆի ու Գամառ Բաթիպա:

Եւ յետոյ ամբողջ մեր պսակաւոր Պ Լ ա դ ա ն նահատակ գրագէտների, որոնց վսեմ ճակատները հոգին տալուց առաջ անապատի բարկ արեւը համբուրեց եւ որոնց աչքերի յետին ցուրքերը երկնքի սատղերը խմեցին:

Բոլոր այս փառապանծ ստուերների եւ խնկելի յիշատակների առջե՛ւ ես ծնկացոք ուխտաւոր, ահա խոնարհում եմ իմ ճակատը, ես՝ որ մենակ եմ այդ սերնդից աշխարհին շեփորելու համար նրանց հոգու մեծութիւնն ու գեղեցկութիւնը եւ իմ արդար ցեղի ահաւոր ողբերգութիւնը:

Եւ ես չեմ որ գրել եմ, այլ իմ հայրենիքի հոգին է բռնել իմ գրիչը քառասուն տարուց ի վեր:

Ես գրել եմ այնպէս, ինչպէս իմ հայրենիքն է շնջացել իր հոգմբերի սոյլերով, իր մրրիկներով, իր երգերով ու պարերով, իր ցաւերով ու խնդութեամբ:

Ես գրել եմ այնպէս, ինչպէս լալիս էի, երբ տակաւին մանակ, մօրս տրտում կրգերին էի ունկնդիր, եւ երբ իր սրտի մութ մորմորն էի կարդում իր արցունքոտ աչքերում եւ խնդում էի, երբ ժպիտն էր խաղում իր անուշ դէմքին:

Այսպէս եմ գրել ես:

Ի զուր իմ ստեղծագործութեան մէջ որեւէ գրական դպրոց փնտռեցին:

Իմ գրական դպրոցը Հայ Հայրենիքը եւ առհասարակ մարդկային ցաւն ու տառապանքն է. ինձ համար մարդկային ամէն էակ փերսզոյն նպատակ է եւ ոչ միջոց եւ իր կեանքի ցաւազին յեզ-

յեղումները՝ բարձրագոյն արժէք, որ կարող է գեղեցկացնել ամե-  
նապէս արահամ արեւստը:

Ճակատակիրն ուզեց, որ ես ծնեմ Մասիս լանջերին, Հայոց  
աշխարհի տիտանի ոտքերի տակ ուր գալիս են մեռնելու մեր  
հայրենիքը ծւառող գարշելի սահմանները, մահահոտ ու փտա-  
ժէտ օձերի պէս, թողնելով Հայոց Հսկան աննկուն եւ Ա գ ա տ ն  
Մ ա ս ի ս:

Հայոց աշխարհի սիրտն ու կեդրոնն է այստեղ, ուր հասան  
ինձ մեր աշխարհի բոլոր մասերի ապրած զուլումի ճիշերը եւ բո-  
լոր ահագանգերի զօղանջը:

Այստեղ բոլոր հովերը հէքեաթներ ունեն իրենց թեւերին, եւ  
խորհուրդ՝ իրենց սայլերի մէջ, եւ այստեղ Մասիսը, Հայրենիքի  
զգառ Ոգին իր վիթխարի բազուկների մէջ գրկած՝ պահում է իր  
խոժոռ հայեացքը նետի պէս դարերի սիրտը մխրձած, պահում  
է... եւ սպասում...

Այստեղ ծնեցի:

Եւ ես ո՛չ ուռւտահայ եմ:

Ո՛չ թիւրքահայ:

Ո՛չ պարսկահայ:

Ես պարզապէս հայ եմ: Հայ Հայրենիքի քաղաքացի այն օրւ-  
նից, երբ բազուկներս ոյժ առին եւ մտածումներս կերպարանք:

Եթէ արժանիք ունիմ, ա՛զգ իմ սիրելի, այս միակն է՝

— Ծնւած ու ապրած Հայաստանի քաղաքացի:

Արմենիա՛, Արմենիա՛, ո՛վ դու աշունուրց հիւսիսականաց վե-  
հագոյնս, դու որ չորս հազար տարիներից ի վեր լոյսի ու քաղաք-  
այրթութեան ջահակիրն եղար քո զրախտային բարձրաւանդակների  
կրայ եւ Լոյսի սիրուն սուսերամերկ ծառացար համայն Ասիայի  
բարբարոսութեան դէմ որպէս Պալլաս Աթենաս, որպէս քո «Մայր  
Ամենայն զգաստութեանց» Անահիտ:

Արմենիա, Արմենիա՛...

Ո՛վ դու սկիզբն իմ բոլոր ուրախութիւնների եւ իմ բոլոր տրտ-  
մութիւնների:

Ո՛վ դու աղբիւրն իմ բոլոր յոյսերի, եւ բոլոր յոյզերի:

Եւ բոլոր իմ բերկրանքների:

Եւ բոլոր իմ խորհուրդների:

Ո՛վ իմ պաշտելի Արմենիա:

Եւ ահա դարձեալ տրտմութիւն ունիմ, թողէք որ այս հանդի-

սաւոր ժամին ասեմ վերջապէս դառն ու ահաւար ճշարտութիւնը,  
որ շիկացած երկաթի ճիպոտներով պէտք է որ ամէն հայ մարդի  
հոգին մտրակի:

Թողէ՛ք որ ասեմ՝ թէ մի Օր — մի երէկ էր — մի կախարհիչ Օր,  
ազատութիւնը աստուածային փայլով ու գեղեցկութեամբ զարդա-  
լուն, եւ արշալոյսներով իր դիւթական ճակատը պահւած, եւ իր  
թովիչ աչքերից կեանքի եւ երջանկութեան ցոլբեր արծակելով մեր  
հայրենիքի դուռը ծեծեց ու ասաց:

— «Տե՛ս, նայիր, ե՛ս եմ ահա, քո երազած Ազատութիւնը, տես  
ի՛նչ գեղեցիկ եմ եւ ես բոնն եմ»:

Իայց մենք հայ չէինք, այլ թիւրքահայ, ուռւտահայ, պարսկա-  
հայ, ամերիկահայ, նաեւ զարաբազցի, վանցի, մշեցի, երեւանցի,  
կարնեցի եւ նրան՝ մեր Փրկչին չհասկացանք:

«Յիւրան եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան»:

Եւ ազատութիւնը մեր դրանը լացեց, մղկտաց ու հեռացաւ:

Ա՛հ, թէ մենք միայն եւ միայն «Հայ» լինէինք այդ օրերին...

Ես այնուամենայնիւ հաւատ ունեմ խորունկ ու ժայռի պէս  
անասան, որ նա պիտի գայ վերստին, Ազատութեան այն աստուա-  
ծային գեղեցկութիւն:

Այդ Հաւատը, հոգուս խորանուժ նառազայթող անշէշ բոց է, որ  
ոչինչ եւ ոչ որ կարող է մարել:

Հաւատացէք ինձ, հաւատացէք ինձ, այս հանդիսաւոր ժամին  
ես խօսում եմ այնպէս, ինչպէս կը խօսէի օրհասիս ժամին դէպք  
երկիրը չւող իմ հոգուն:

Մեր իբրւունքի եւ արդարութեան յողթանակը ես տեսնում  
ու ապրում եմ, էութեանս բոլոր թելերով, անգամ մեր դժխեմ օ-  
րերի այս թանձր ու ցուրտ մթնոլորտի սարսուռների մէջ:

Ես զգում եմ նրա փոթորկածին հեւքը, լսում եմ նրա թնդի-  
նը, որպէս ռազմի դաշտերում մրկփօրէն սլացող սալամբակ երկ-  
վարների դոփիւնը:

Ես տեսնում եմ այդ գերագոյն յողթանակը ցեղիս զաւակների  
բոց ու կրակ աչքերի մէջ, մեր մանուկների, մեր պատանիների,  
մեր վարդ կոյսերի շողարձակ բիբերի մէջ, ուր եռում է ստեղ-  
ծագործող, անհանգիստ իմաստութիւնը եւ հայրենիքի անմաք  
կարօտը:

Ո՛վ իմ աստանդական հայրենիք, դու որ բոլոր հորիզոնների  
տակ թափառիկ, զուխդ զնելու տեղ ես փնտռում վազայ մեծ



երազի հառաչք շրթունքներին:

Դուք, ո՞վ շինական, աշխատաւոր եղբայրներ, դուք բարոյ՝  
ո՞վ եւ լինէ՞ք հայրենաբազմ հայ մարդիկ, որ տակաւին հայրենի  
հոգի փոշին ունիք ձեր ոտներին եւ ձեր օջախների կրակը՝ ձեր  
սրտերին, երբ օրւայ վստտակից յետոյ պարտաւսած ու տրտում  
տուն դառնաք, թէ թուլացած է ձեր հաւատը՝ զէպի ձեր բախտը,  
թէ մթազնել է ձեր հոգում պատկերը մեր նւիրական հայրենիքի,  
նւազել է Յոյսը, նւազել է պայքարի եռանդն ու կորովը, թէ հայ-  
րենիքի ու ազատութեան սէրը յորանջ է դարձել եւ օջաղի արդար  
ձուխը երազ ու հէքեաթ, աղայում եմ ձեզ, նայիցէք ձեր զաւակ-  
ների աչքերին, խորը, խորը, եւ իրաւունքի ու Արդարութեան յաղ-  
թանակը ձեր հաւատը վերստին կը կենդանանայ, կը փայլատակի  
սրբէն մոտիկների տակից բռնկւող կրակ:

Այդ աչքերի բո՛ցը...

Այսօր որքան ազգիք են ուղկաններ նետում այդ սրաւու

համար:

Զգո՛ւ՛՛ յ՛՛ սպիտակ ջարդի սպառնալիք է այս, մի նոր տեսակի

Տէր-Չօր:

Հայ մանուկը եւ ճանաչում եմ իր աչքերից հագարների մէջ:  
եւ երբ նա իմ հոյիքն հարցին պատասխանում է օտար լեզ-  
ւով, վերստին յիշում եմ սարսուռը հայ մայրերի, որոնց ձեռքից  
բարբարոսները խլում էին զաւակները մահահոտ անապատնե-  
րում:

Ո՛հ, ո՛հ, չպիտի տանք, չպիտի գիջենք մեր երախաները, օր-  
քան եւ յագմանան ձկնորս եւ ուղկան:

Ես հաւատում եմ, հայ ժողովուրդ, քո Գ ա Ր Օ ի ն, ինչպէ՞  
հաւատում եմ որ ամէն առաւօտ արշալոյսը կը բացուի: Հաւա-  
տում եմ, վանգի կամբջընկէց Արարսի ափերին Մասիսի խորհր-  
դաւոր հայեացքի տակ մեր Հայրենիքը կայ որ մեր թրթռացող  
հոգին է բռնել իր մայրական քնքոյշ ձեռների մէջ եւ ակնդէ՞  
ու խռովայոյզ՝ նայում, նայո՛ւմ է ճամբաներին:

Եւ հեռու չէ այն օրը, երբ իր բազուկները տարածած, նս-  
կընդունի հեռաւոր հորիզոնների տակ յաճող ու հեծող իր զա-  
ւակների կարօտակէզ բազմութիւնները, եւ բիւրաւոր ծայներ կի  
թնդան Մայր Արարսի ափերին:

«Արմենիա, Արմենիա, ո՞վ իմ հոգու յաւիտենական անգա-  
տան, ո՞վ իմ պաշտելի հայրենիք...»:



« Ազգային գրադարան



NL0382017

65.968